ՆԱԶԱՐ.– Դրուստն ես ուզո՞ւմ: Մի ժամանակ կար, նեղը որ ընկնում էի՝ վախենում էի: Վերջը տեսա, որ ամեն տեղ էլ դուրս եմ պրծնում: Հիմի էլ տեսնում եմ, որ հե՛րն անիծած, քե՛ֆ արա, մարդիկ էնքան սարսաղ են, որ ամեն տեղ էլ կպրծացնեն: Սարսաղ աշխարհք Է, սարսաղ մարդիկ: Աշխարհքը Էսպէս սարսաղ է եկել, սարսաղ էլ պիտի գնա: (Երգում է) Ա՛ման, ամա՛ն, այ ջա՛աան;

ՄՈՒՆԵՏԻԿ.– (Դրսից) Կոչնա՛ա՛ա՛կ: (Աղմուկ Է լսւում, որ հետզհետէ մօտենում է:)

ՆԱԶԱՐ.– (Վեր թռչելով) Գեադա՞, Սենեկապե՞տ: (Սենեկապետը ներս է վազում) Գեադա, Էս ի՞նչ է:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Այլակերպում է վիճակի, տէր ի՛մ,

ՆԱԶԱՐ.– Ղոլամներս կանչի, ի՞նչ ես դուրս տալիս:

Սենեկապետը դուրս է վազում եւ իսկոյն ներս գալիս Թամադայի, Սաքոյի, Ղոռոբուղայի եւ միւս հսկաների հետ:

ՆԱԶԱՐ.– Հա, Էստեղ է՞ք: Կանգնեցէք Էստեղ, տեսնենք ի՞նչ բան է:

ՆԱԶԱՐ.– (Ներս գալով) Կռիւը մեծացաւ, արքայից արքա: Տագնապ է: (Դուրս է վազում:)

ՆԱԶԱՐ.– (Միւսներին) Գնացէք դռանը կանգնեցէք, (Թամադան, Սաքոն, Ղոռոբուղան դուրս են ելնում:)

ՈՒՍՏԻԱՆ.– Էս ի՞նչ զուլում էր: Անջախ իմ թագուհի ժամա՞նակս պիտի էդ շները թափուէին վրադ:

ՆԱԶԱՐ.– (Անհանգիստ) Գեադա՞, Էս Էսպէս չի լինի, (Պատրաստւում է փախչելու) Հը՞: (Աղմուկը մեծանում է) Քաղաքը մտան: (Դեսուդեն է ընկնում փորը բռնած) Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ…

ՈՒՍՏԻԱՆ.– Այ մարդ, ի՞նչ եղաւ:

ՆԱԶԱՐ.– Զարհուսար եղաւ, թագաւորութիւն չեղաւ, վոյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ… ֆռթոնա է, տէրութիւնը խառնուեց:

ՈՒՍՏԻԱՆ.– Հը՞… տէրությո՞ւնը… ամա՛ն: (Դեսուդեն է ընկնում եւ զանազան թանկագին իրեր է կոխում գրպանը: Հանկարծ կանգ է առնում եւ ականջ դնում) Հը՞: (Աղմուկը մեծանում է) Չէ, մեծացաւ: (Ծոցն է դնում զանազան իրեր:)

ՆԱԶԱՐ.– Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ… (Վազվզում է զանազան կողմեր:)

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս վազելով) Օ՛ ո ո… Գերագոյն… օգնութեան հասիր… (Դուրս է վազում:)

ՍԱՔՈ.– (Ներս է վազում) Բը՛, բը՛, բը՛, բը՛…